

**ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ**  
**ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**  
**ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ**

- 1935 Ծնվել է հունիսի 20-ին Երևանում, անվանի պատմաբան-բանասեր Մորուս (Մարգար) Հասրաթյանի և վաստակավոր ուսուցչուհի Սիրանուշ Մարտիրոսյան-Հասրաթյանի ընտանիքում
- 1952 Ոսկե մեդալով ավարտել է Երևանի Խ.Աբովյանի անվան արական միջնակարգ դպրոցը
- 1958 Ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի ճարարապետական բաժանմունքը
- 1958-1964 Աշխատել է «Երևաննախագիծ» ինստիտուտում որպես ավագ ճարտարապետ
- 1961 Ավարտել է Երևանի Մարքսիզմ-Լենինիզմի երեկոյան համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը
- 1962 ՄՍՀՄ ճարտարապետների միության անդամ
- 1964-ից Աշխատում է Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Արվեստի ինստիտուտում
- 1964-1974 Հայաստանի ճարտարապետների միության վարչության անդամ, ճարտարապետության պատմության սեկցիայի նախագահ
- 1965-ից Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ
- 1968 ՄՄԿԿ անդամ
- 1969 Պաշտպանել է ատենախոսություն «Սյունիքի XVII-XVIII դդ. ճարտարապետական համալիրները» թեմայով և ստացել ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան
- 1970 Ստացել է «ՀԼԿԵՄ մրցանակի դափնեկրի պատվավոր կոչում» երիտասարդական կառույցների նախագծման համար
- 1971-1976 Արվեստի ինստիտուտի գիտնական քարտուղար
- 1973 ՄՍՀՄ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից ստացել է «Ավագ գիտական աշխատողի» կոչում՝ «Ճարտարապետության տեսություն և պատմություն» մասնագիտության գծով
- 1975 Հայ արվեստին նվիրված միջազգային I սիմպոզիումի (Բերգամո, Իտալիա) Հայաստանի պատվիրակության ղեկավարի տեղակալ
- 1978 Հայ արվեստին նվիրված միջազգային II սիմպոզիումի (Երևան) աշխատանքային կազմակերպչական կոմիտեի նախագահ
- 1979 Մասնակցել է Կովկասագիտական միջազգային I սիմպոզիումին (Վենետիկ, Իտալիա)
- 1979-1985 Արվեստի ինստիտուտի Հուշարձանների համահավաքի բաժնի վարիչ
- 1980-ից Հայաստանի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության (այսօր՝ գործակալություն) գիտական խորհրդի անդամ
- 1981 Մասնակցել է Հայ արվեստին նվիրված միջազգային III սիմպոզիումին (Վենետիկ, Իտալիա)
- 1982-ից Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության հանրապետական խորհրդի նախագահության անդամ
- 1985 Հայ արվեստին նվիրված միջազգային IV սիմպոզիումի (Երևան) աշխատանքային կազմակերպչական կոմիտեի նախագահ

- 1988 Մասնակցել է Սորբոնի համալսարանի (Փարիզ) «Հայ-բյուզանդական առնչություններն արվեստի բնագավառում» կոլոքվիումին  
- Հայ արվեստին նվիրված միջազգային V սիմպոզիումի (Վենետիկ, Իտալիա) գիտական կազմակերպչական կոմիտեի անդամ
- 1988-ից  
1990 Արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի վարիչ  
Պարզևատրվել է ՍՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի Պատվավոր դիպլոմով՝ որպես «Հայաստանի IV-XIX դդ. ճարտարապետությունը» (Հոռմ, 1988) «հանրագիտարանային ուսումնասիրության հեղինակային խմբի անդամ»  
- մասնակցել է Հայկական ճարտարապետական ժառանգության պահպանության միջազգային սիմպոզիումին (Ստրասբուրգ, Ֆրանսիա)
- 1993 Մասնակցել է «Երկրաշարժերը և բնակավայրերը» միջազգային գիտաժողովին (Հոռմ)  
- պաշտպանել է ատենախոսություն «Հայաստանի XV-XIX դ. սկզբի ճարտարապետությունը» թեմայով և ստացել Ռուսաստանի Դաշնության ճարտարապետության դոկտորի գիտական աստիճան
- 1994-ից  
1997 Դասավանդում է Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիայում  
Մասնակցել է «Հայերը Իտալիայում» գիտաժողովին (Թուրին, Ճենովա, Լիվորնո)  
- մասնակցել է Իրանում հայկական պատմաճարտարապետական հուշարձանների վերականգնման և նորոգման գիտամեթոդական հարցերի քննարկմանը (Թավրիզ, Թեհրան, Իսպահան)
- 1998 Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի ակադեմիական խորհրդական
- 1998-ից Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանին կից գիտական կոչումներ շնորհող 029 մասնագիտական խորհրդի անդամ
- 1999 Հրավիրվել է Սիրիա՝ ուսումնասիրելու վաղքրիստոնեական հայաստրական ճարտարապետական առնչությունները
- 1999-ից Հայկական հանրագիտարանի գիտախմբագրական խորհրդի անդամ  
- դասավանդում է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում
- 2000 Հրավիրվել է Սորբոնի համալսարան (Փարիզ)՝ վարելու «Հայկական միջնադարյան ճարտարապետություն» դասընթացը
- 2001 «Քրիստոնեական Հայաստանի արվեստը» միջազգային գիտաժողովի (Երևան) կազմակերպչական կոմիտեի նախագահ
- 2001-ից Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց դպրատան գիտական խորհրդի անդամ  
- Հուշարձանների և պատմական վայրերի պահպանության միջազգային խորհրդի Հայաստանի ազգային հանձնաժողովի անդամ  
- Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության (RAA) գիտական խորհրդի անդամ  
- «Հայկազյան հայագիտական հանդեսի» (Բեյրութ) խմբագրության խորհրդատուների հանձնախմբի անդամ
- 2002-ից «Հայ արվեստ» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ  
- դասավանդում է Երևանի պետական համալսարանում
- 2003 Ստացել է պրոֆեսորի գիտական կոչում  
- մասնակցել է Կալիֆոռնիայի համալսարանի «Պատմական Հայաստանի

- քաղաքները և գավառները» միջազգային գիտաժողովին (Լոս Անջելես, ԱՄՆ)
- պարզևատրվել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Պատվոգրով՝ «գիտության բնագավառում ունեցած անխոնջ, բազմաբեղուն գործունեության համար»
- 2003-ից ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի գիտական խորհրդի անդամ
- 2004 Մասնակցել է Հուշարձանների վերականգնման ժամանակակից տեխնոլոգիաների I կոնգրեսին (Շիրազ, Իրան)
- 2005 Մասնակցել է «Հայկական արվեստ և ճարտարապետություն» միջազգային գիտաժողովին (Զալցբուրգ, Ավստրիա)
- պարզևատրվել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի «Վաստակագրով»
- 2006 Ընտրվել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ
- «Հայաստանի 12 մայրաքաղաքները» ցուցահանդեսի (Փարիզ, Ֆրանսիա) գիտական ղեկավար
- 2007 Ստացել է ՀՀ վաստակավոր ճարտարապետի պատվավոր կոչում
- ՀՀ պաշտոնական պատվիրակության կազմում մասնակցել է Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու վերաբացմանը
- 2009 Ստացել է ՀՀ պետական մրցանակ՝ «Հայ արվեստի պատմություն» աշխատության համար (հեղինակային խմբի կազմում)
- պարզևատրվել է ՀՀ Մշակույթի նախարարության Ոսկե մեդալով
- 2010 Մասնակցել է «Հայկական գաղթօջախների արվեստը» միջազգային գիտաժողովին (Զամոսոյե, Լեհաստան)
- Հայ ճարտարապետությանը նվիրված դասախոսություններ է կարդացել Բեյրութում (Լիբանան) և Լիոնում (Ֆրանսիա)
  - պարզևատրվել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության Ոսկե մեդալով
  - Պարզևատրվել է Երևանի պետական համալսարանի Ոսկե մեդալով
- 2011 Ստացել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի՝ Թորոս Թորամանյանի անվան մրցանակ «Վաղբրիստոնեական հայկական ճարտարապետությունը» (Մոսկվա, 2010) աշխատության համար
- պարզևատրվել է ՀՀ վարչապետի հուշամեդալով